ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 4/4

երեսունմեկը մայիսի 2012 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ (ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ)» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 7-րդ ենթակետով և քննարկելով կրեդիտային համակարգով ասպիրանտուրայում սովորող հեռակա ասպիրանտների առաջադիմությունը՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է՝

1. <<Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում (հետազոտողի պատրաստման կրթական ծրագիր)>> կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 2.1.3. կետը լրացնել հետևյալ նախադասություններով.

«հեռակա ուսուցման համակարգում սովորող ասպիրանտների մանկավարժական պրակտիկայի յուրաքանչյուր տարվա կրեդիտները կարելի է փոխարինել այդ տարվա մասնագիտական աշխատանքի վերաբերյալ տեղեկանքով:

Առկա ուսուցմամբ ասպիրանտներին թույլատրել մանկավարժական պրակտիկայի 4 կրեդիտը փոխարինել 1 (մեկ) տարվա մասնագիտական աշխատանքի վերաբերյալ տեղեկանքով»:

բ. 2.2.1. կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«հումանիտար մասնագիտություններով ասպիրանտներին թույլատրել փոխարինել այդ տարվա սեմինարների համար նախատեսված 4 կրեդիտը 1 (մեկ) ելույթով գիտաժողովում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ